

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» N 2318-L որոշմամբ սահմանված 2025թ. միջոցառումների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ

N	Ռազմավարության անվանումը, ընդունման ամսաթիվը և որոշման համարը	Միջոցառման/գործողության անվանում	Ակնկալվող արդյունք	Կատարման վերջնաժամկետ	Կատարման ընթացիկ վիճակ (կատարված է, կատարված չէ, կատարված է մասնակի)
1	Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» N 2318-L որոշում	Արևային ֆոտովոլտային կայանների կառուցում՝ ՀՀ էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարության (մինչև 2040թ.) համաձայն (խոշոր, փոքր և ինքնավար կայաններ)	Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում՝ հաշվի առնելով, որ ջերմոցային գազերի արտանետումների գրեթե 70%-ը էներգետիկա ոլորտից են, ինչպես նաև էներգետիկ անվտանգության և անկախության ապահովման զարգացման առումով	Մինչև 2050թ .	Ընթացիկ
		<i>Ցուցիչ՝ Խոշոր արևային էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորություն</i>	<i>Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում</i>	2025թ.	<i>ՀՀ-ում գործում են 93 արևային կայաններ, ընդհանուր հզորությունը՝ շուրջ 456,04 ՄՎտ:</i>

					<p>Լիցենզիա են ստացել 36 արևային կայաններ՝ ընդհանուր 156 ՄՎտ հզորությամբ:</p>
		<p>Ցուցիչ՝ Փոքր արևային էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորություն</p>	<p>Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում</p>	<p>2025թ.</p>	<p>Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների 01.01.2026թ. դրությամբ ՀՀ-ում գործում են մինչև 1 ՄՎտ դրվածքային հզորության փոքր արևային էլեկտրակայաններ գումարային շուրջ 16 ՄՎտ հզորության:</p>
		<p>Ցուցիչ՝ Ինքնավար արևային էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորություն</p>	<p>Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում</p>	<p>2025թ.</p>	<p>«Ինքնավար արևային էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորություն» ցուցանիշ՝ 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ պայմանագիր կնքած ինքնավար էներգաարտադրողների ընդհանուր քանակը</p>

				50059 է, շուրջ 640.14 ՄՎտ ընդհանուր հզորությամբ, իսկ տեխնիկական պայմաններ ստացած, բայց դեռևս պայմանագիր չկնքած ինքնավար էներգաարտադրողների քանակը 466 է, շուրջ 22.16 ՄՎտ ընդհանուր հզորությամբ:
	Ցուցիչ՝ Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցի կորուստներ	Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում	2025թ.	2025 թվականին բաշխման ցանցում տեխնոլոգիական կորուստները կազմել են 6.5%:
	Ցուցիչ՝ Արտադրվող արևային էներգիայի մասնաբաժնի աճ ընդհանուր արտադրվող էլեկտրաէներգիայում	Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում	2025թ.	2025 թվականին ՀՀ-ում արտադրվող արևային էներգիայի մասնաբաժինն ընդհանուր արտադրվող էլեկտրաէներգիայում կազմել է շուրջ 13.7 %:
	Ցուցիչ՝ Պահուստային մարտկոցների համակարգերի հզորություն	Մարտկոցային պահպանման տեխնոլոգիան թույլ է տալիս կուտակել կանաչ	2025թ.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության

			<p>էներգիա և օգտագործել այն, երբ ուղղակի մատակարարումը հնարավոր չէ</p>		<p>պատվերով Համաշխարհային բանկի կողմից իրականացվում է էլեկտրաէներգիայի պահեստավորման համակարգերի (BESS) ուսումնասիրությունը, որը ներկայումս գտնվում է մրցութային փուլում: Պայմանագրի կնքումը ակնկալվում է 2026 թվականի փետրվարին, իսկ ուսումնասիրության վերջնական արդյունքների ներկայացումը՝ 2026թ. հունիսին: Ուսումնասիրության շրջանակում նախատեսվում է գնահատել պահեստավորման համակարգերի հնարավոր տեղակայման վայրերը հաղորդման և համակարգային մակարդակում, ինչպես</p>
--	--	--	--	--	--

					<p><i>նաև որոշել տեխնիկապես և տնտեսապես օպտիմալ հզորությունները: Միաժամանակ նախատեսվում է, որ հնարավոր հզորությունների վերաբերյալ նախնական համակարգային ազդանշաններ կձևավորվեն 2026 թվականի մարտի վերջի դրությամբ:</i></p>
2		<p>Հողմային կայանների կառուցում՝ ՀՀ էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարության (մինչև 2040թ.) համաձայն,</p>	<p>Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում՝ հաշվի առնելով, որ ջերմոցային գազերի արտանետումների գրեթե 70%-ը էներգետիկա ոլորտից են, ինչպես նաև էներգետիկ անվտանգության և անկախության ապահովման զարգացման առումով</p>	Մինչև 2050թ.	Ընթացիկ

		Ցուցիչ՝ Հողմային էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորություն	Բարձրացնում է կանաչ էներգիայի տեսակարար կշիռը ՀՀ էներգետիկ խառնուրդում և հետևաբար նվազեցնում ածխաթթու գազերի ծավալը	2025թ.	Հողմային էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորություն՝ 4.3 ՄՎտ:
3		Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցում՝ ՀՀ էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարության (մինչև 2040թ.) համաձայն	Զերմոցային գազերի արտանետումների կրճատում՝ հաշվի առնելով, որ ջերմոցային գազերի արտանետումների գրեթե 70%-ը էներգետիկա ոլորտից են, ինչպես նաև էներգետիկ անվտանգության և անկախության ապահովման զարգացման առումով	Մինչև 2050թ.	Ընթացիկ
		Ցուցիչ՝ Փոքր հիդրոէլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորություն	Զերմոցային գազերի արտանետումների կրճատում	2025թ.	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության

					տարածքում գործող փոքր հիդրոէլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է շուրջ 403,2 ՄՎտ:
4		«Շենքերի էներգաարդյունատես արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿԸ ծրագիր	Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում՝ շենքերի էներգաարդյունավետ ջերմաարդիականացման միջոցով	Մինչև 2050թ .	Ընթացիկ
		Ցուցիչ՝ Գոյություն ունեցող շենքերի ջերմաարդիականացում	Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում	2025թ.	Ջերմաարդիականացվել է 66 հասարակական և 21 բնակելի շենքեր
5		ԶԳ ընդհանուր արտանետումներ	Միջազգային պարտավորությունների կատարում	Մինչև 2050թ.	Համաձայն 1990-2022թթ. Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային գույքագրման փաստաթղթի՝ ԶԳ ընդհանուր արտանետումները 2022 թվականին կազմել են 13,314.08 կտ CO₂ համ

6		<p>ԶԳ արտանետումներն ըստ ոլորտների</p>	<p>Միջազգային պարտավորությունների կատարում</p>	<p>Մինչև 2050թ.</p>	<p>Համաձայն 1990-2022թթ. Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային գույքագրման փաստաթղթի՝ ԶԳ արտանետումները ըստ ոլորտների 2022 թվականին կազմել են՝ Էներգետիկա – 8,850.55 կտ CO₂ համ. Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում – 1,609.00 կտ CO₂ համ. Գյուղատնտեսություն - 1,989.89 կտ CO₂ համ. Թափոններ – 864.63 կտ CO₂ համ.</p>
7		<p>Ածխածնի երկօքսիդի կլանում և պահեստավորում</p>	<p>Միջազգային պարտավորությունների կատարում</p>	<p>Մինչև 2050թ.</p>	<p>Համաձայն 1990-2022թթ. Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային գույքագրման փաստաթղթի՝</p>

					կլանված ՋԳ-ի քանակը 2022 թվականին կազմել է 381.87 կտ CO₂ համ.
8		Էլեկտրոմոբիլների քանակի ավելացում	Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում	Մինչև 2050թ.	Ընթացիկ
		Ցուցիչ՝ Էլեկտրոմոբիլների քանակի ավելացման տեմպ	Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում	2025թ.	01.01.2025-24.12.2025թթ. ընթացքում ՀՀ ներմուծված բացառապես էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների քանակ՝ միայն էլեկտրական շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված 10 կամ ավելի մարդ՝ 7 հատ միայն էլեկտրական շարժիչով շարժման մեջ դրվող՝ թեթև մարդատար ավտոմոբիլներ և շարժիչային այլ տրանսպորտային միջոցներ՝ 18379 հատ

					<p>Էլեկտրական շարժիչով շարժման մեջ դրվող մոտոցիկլներ (ներառյալ մոպեդները) և հեծանիվներ՝ 2882 հատ</p> <p>միայն էլեկտրական շարժիչով շարժման մեջ դրվող շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ բեռներ փոխադրելու համար՝ 657 հատ</p>
9	<p>Օրգանական թափոնների վերամշակման կայանների (աէրոբ կայունացում (կոմպոստավորում) և/կամ անաէրոբ խմորում՝ կենսագազի և պարարտանյութերի արտադրությամբ) և թափոնների գազաֆիկացման կայանների (էներգիայի և/կամ քիմիական արտադրությամբ) գործարկում</p>	<p>Մեթանի արտանետումների նվազեցում և շրջանաձև տնտեսության զարգացում</p>	<p>Մինչև 2050թ.</p>	<p>Ընթացիկ</p>	
	<p>Ցուցիչ՝ Հավաքված թափոնների քանակը</p>	<p>Մեթանի արտանետումների նվազեցում և շրջանաձև տնտեսության զարգացում</p>	<p>2025թ.</p>	<p>Հավաքված թափոնների քանակի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն</p>	

					<p>առկա չէ: ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից համայնքներից հավաքագրվում և ամփոփվում է համայնքային աղբավայրեր տեղափոխված կոշտ կենցաղային թափոնների քանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, համաձայն որի՝ համայնքային աղբավայրեր տեղափոխված կոշտ կենցաղային թափոնների քանակը կազմում է տարեկան շուրջ 637 հազ տոննա:</p>
		<p>Ցուցիչ՝ Տեսակավորված թափոնների մասնաբաժինը</p>	<p>Մեթանի արտանետումների նվազեցում</p>	<p>2025թ.</p>	<p>Հավաքված թափոնների քանակի, ինչպես նաև տեսակավորված թափոնների մասնաբաժնի</p>

					<p>վերաբերյալ ամփոփ և հավաստի տեղեկատվություն առկա չէ:</p>
--	--	--	--	--	--